նմանապէս ըստ կարգի, որքան որ անկցի տեղի անկելոյն լցցի երկրորդն նորին։

ԳԼՈՒԽ ՄԶԱ.

Ամենայն զինուոր կարէ արձակիլ 'ի վերայ այնմ, որում զօրագլուխ իւր հրամայէ, բայց 'ի վերայ միաբան տանուտերաց, տանն հայոց, և ընդ դէմ հրամայեցելոց տանէն հայոց։

ԳԼՈՒԽ ՄԶԲ.

Զինուոր ամուսնացեալ հատուցանէ կէս ռոճիկի իւրոյ կնոջ իւրոյ։

ԳԼՈՒԽ ՄԶԳ.

Ամենայն յաղթող զօրագլուխ 'ի վերայ գերեզմանի իւրոյ կարող է դնանիլ մատուռ շինեցեալ ծախիւք իւրովք։

ԳԼՈՒԽ ՄԶԴ.

Նախարարն զարդարի փառօք և արժան կարդի պաշտօնի իւրոյ այսպիսեօք.

Ուրար սեաւ 'ի պարանոց 'ի թիկնամէջ։

'Ի վերայ ուրարոյ ոսկայտիպ առիւծ մի։

Ճառագայթ մի ակամբ փայլածու 'ի վերայ ձախու կրծոց։

Եւ 'ի միջի ճառագայթի գառն ասուածոյ դրշակ խաչիւ։